



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԻՂՐԳ. ՄԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԲԵՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-
տանի կամօքն Աստուծոյ Նախօրոպոսապէս եւ Կաթու-
ղիկոս Ամենայն Հայոց, Մայրաքոյն Պատրիարք Համազ-
գական Նախատնծար Արքույ Արարեսեան Առաքելական
Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Գերաշնորհ Առաջնորդի Թեմին Հարապատ
որդւոյ Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի, ինդալ ի Տէր.

Վիշա եւ տառապանք հանապազօրեալ, որ շուրջ
զմեօք, ոչ դօրեն լսեցուցանել զբառբառ Տեառն, որ
յուշնին իմ հնչէ անդադար, եթէ՝ յՈրդի մարդոյ, Գէա
կացուցի զքեզ ժողովրդեան իմոյ» առ ի լինել հոգածու եւ
խնամող հոգեկան կարողութեանցն որ ի նոսառ Յաւ ի սիրտ
եւ վշտազնեալ ի հոգի ասեմք, զի հոգեւոր որդիք մեր ի
քաղաքս, ի դեօդս եւ յայլուք, ուծացեալ ի հայրենի մա-
ռանդութենէն, ի Ս. Եկեղեցւոյս մերմէ, իսպառ մոռա-
ցեալ են զսարսիս իւրեանց առ սրբութիւնս, աւանդեալս
ի նախնեաց մերոց:

Չեն գանխուլ ի Գերաշնորհութենէ Չերմէ, եթէ պատ-
ճառ իրացս այսոցիկ ի ներքս ի մեզ պարտիմք տեսանել,
զքահանայից մերոց ասեմք, զդասուց վարդապետաց, որք
ոչ ևս անձանձիր աշխատ լինին ըստ նախնոյն ի բարոյա-
կան կրթութիւն նոցին իսկ հաւատացեալ ժողովրդեան՝
որոց Դէտ եմք Մեք և նոքա հովիւք կարգեալ ի վերին
Տեսչութենէն: Երանեմք, աւանդ, անցելոց ժամանակաց,
յորում վարդապետք բանին յար և հանապազ հնչեցու-
ցանէին զբառբառ Կենարարին: յունկն մանկանց Ս. Եկե-
ղեցւոյ, յայդմիկ իսկ տեսանելով զկոչումն իւրեանց և
բացայայտ մեկնութեամբ ուսուցանելով յեկեղեցիս զվար-
դապետութիւն հարցն մերոց սրբոց, անձանձիր յեղլով և
յուշ առնելով նոցա զվարս նախնեաց մերոց առաքինեաց
իրրև օրինակ բարւոյ և զրուատելով դաւանդս հայրենի
պատմութեան, զանցելոց ժամանակացն արանց մեծաց
ճառելով զգործոց ի դաստիարակութիւն և զվատացն արարս
յունկն յեղլով հաւատացեալ հօտին ի զգուշութիւն: Այլ
յաւուրս յայսոսիկ բեմք սրբութեանց մերոց իսպառ
խրթնացեալ ի բարեգարգութենէ և ի կենսատու վարդա-
պետութենէ բանին, ոչ ևս ըղխեցուցանեն զծորանս
անսպառ աղբերաց յոռոգումն բանաւոր անդաստանին մե-
րոյ ի ձեռն քարոզչաց բանին, իսկ սպասաւորք սեղանոյ
Տեառն ի պաշտամունս եկեղեցեաց մերոց, աւանդեալս
ի հոգեշունչ հարցն մերոց, ընդ ծիսականին ոչ ունին ջան
և հոգ ի մատակարարութիւն բարոյական անդեան և հո-
գեկան կարեաց հոգևոր դաւակացն իւրեանց, որք տակաւին
ոչ թերանան յաճախել ի Տուն Տեառն՝ ունկնդիր լինել
պաշտամանց հարցն մերոց երանելեաց և լսել բարբառ
կենդանի վարդապետութեան նոցա ի գիւր և ի հեշտ լեզու
հարանց հոգևորաց, վարդապետաց և առաջնորդաց:

Եթէ ի ժամանակս հալածանաց և նեղութեանց, վըշ-
տակիր տարագրութեանց և դառն փորձութեանց նախնիք
մեր յամբովկ ելին պահպանել դաւանդն մեծ և սուրբ՝ ի
վարդապետութիւն բանին, ապա լոկ պարտիմք անդու
ջանից և եռանդեան նոցա, որք անձանձիր եղին գանձինս

իւրեանց ի հոգևոր կրթութիւն ժողովրդեան մերոյ: Եկեղեցիք մեր և վանօրայք, բեմք և գաւիթ ասպարէզ հոգևոր մարտի և խելամուտութեանց մանկանց էին յաւուրսն յայնոսիկ: Արդ զի՞ է, զի հոգևոր դատ մեր, որ այսպիսւոյ մեծի ժառանգութեան կայ սպասաւոր, ոչ կամի ծագիւ իսկ մատին յագեցուցանել զսպասող ժողովրդեանն և հօտին: Ո՞չ ապաքէն առաւել թերացեալ եղև ի պարտիս, քան զնախորդս ժառանգութեանդ. ոչ ջանայցէ արդեօք արթնանալ ի խոր քնոյ և ոչ թօթափիցէ յինքինէ զանփութութիւն ի մատակարարութեան հոգևոր սննդեանն, որում կայ ակնդէտ հօտն իւր մակաղեալ գնովաւ ի խնդիր կենսատու Բանին, յիմաստ և ի գիտութիւն: Միթէ խարան տպերախտութեան կամիցի կրել ի ճակատ առաջի հարցն իւրոց զսարտազանցութեանն ունելով կնիք առաջի հոգևոր որդւոցն իւրոց՝ առաջնոցն մեղանշելով և յեանոցն շար նշաւակ գոլով:

Մի ևս դանդաղեցիք, Դէտք խաշանց հօտի Հայաստանեայց Եկեղեցւոյ, ի միտ առնուլ յաւուրս տառապանաց հասելոց ի վերայ մեր, զի երկիրն մեր ասպականեցաւ և քաղաքք մեր եղնն աւերակք ի սրոյ անօրինաց. հեթանոսք մտին ի ժառանգութիւն հարանց մերոց և արարին զտաճարս մեր որպէս զհիւղս մրգասպահաց, արկին զգիականս հոգևոր որդւոց մերոց սիրելեաց, մարց և քերց մերոց գէշ թռչնոց երկնից և զմարմինս նոցա անարգանաց և զազանաց երկրի, հեղին գարիւնս դատերաց մերոց շուրջ զմեօք և ոչ ոք էր որ թաղէր գնոսաւ. եղաք մեք նախատինք դրացեաց մերոց:

Արդ, զօրացարուք հոգով Տեառն առ ի շրջել շուրջ զցամաքեալ օսկերօք հօտին մերոյ, ածել ի վերայ նոցա շունչ կենդանի, և փշել ի նոսա զոգի կենդանարար՝ բանիւ բարոգութեան ձերոյ, զի օսկր առ օսկր մերձեացի առ իւրաքանչիւր յօդս և կացցի, կանգնեացի ժողովուրդ իմ ի վերայ ոտից իւրոց և վտարանդեալ որդիք իմ կցեացին ընդ միմեանս կապեալ ի մի յազգ և դարձցին անդրէն յերկիրն իւրեանց առ ի կանգնել անդրէն զկործանեալ տաճարս՝ աւանդս նախնեաց մերոց և զյարկս բնակութեան իւրեանց:

Զայս ամենայն գիտացեալ Մեր յունկն Ձեր հնչեցուցանեմք զպատգամն, եթէ «Դէտ կացուցի զքեզ ժողովրդեան իմումն»։ Ղի՛ է, զի թերանան ի պարտիս իւրեանց քահանայքդ որ ընդ տեսչութեամբ Ձերով և յորդոր Ձեզ կարդամք՝ կրկին և երեքկին յիշեցուցանելով թերացողաց զՀայրապետական Կոնգակէ Մերմէ, տուելոյ ի 20 փետրուարի անցելոյ ամի, յորում զԲանն Փրկչին աւանդէաք քարոզել հանապաղ ի կրթութիւն և ի դաստիարակութիւն մանկանց Եկեղեցւոյս և հօտին Մերոյ և եթէ որպիսի եղանակաւ ունին մատչիլ ի մեծ և ի սուրբ դործ պաշտամանդ այդորիկ, զի մի ծարաւի հօտ մեր ելանիցէ ի դաւթէ քարոյական կրթարանին իւրոյ թարց ջամբման հոգևոր անդեան, յորմէ և զեղերումն ի փարտիս օտարս և բաղխումն ի դուռս այլոց։

Աղէ, ջանադիր լերուք քաջալեր հանդիսանալ քարոզիչ վարդապետաց, քահանայից մատակարարաց Բանին, զի և Մեր ընդ Ձեզ մարթասցուք համարս տալ անթերի առաջի Տեառն և Փրկչին մերոյ։

Աղաչեմք զԱստուած բաշխել շնորհս ի յարաշարժ աղբերէն Իւրմէ ամենայն պաշտօնէից իւրոց առ ի շինել և հաստատել զմիտս ժողովրդեան Մերոյ, պահել զհոգևոր որդիան Մեր ի հաւատ, ի յոյս և ի սէր և յանձանձիր ուսումն հոգևոր և մաղթելով կար և զօրութիւն Դերաշնորհութեանդ առ ի լինել մշակ առանց ամօթոյ առաջի Տեառն և համարատու առաջի Մեր։

Ողջ լերուք և զօրացեալ շնորհօք Տեառն և օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝

Գ Է Ո Ր Գ Ե.

ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 24 նոյեմբերի 1915 ամի

Եւ ըստ Տօմարիս ՌՅԿԴ

Ի Հայրապետութեան Մերում Դ. ամի

Եւրաբատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վարդաբնակարան

Թ. 1120.